ՀՀ ԱՆ «ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ԹԻՎ 43/Գ

16.06.2025թ.

Որոշում

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԴԴԲԳԳԿ-ՀԲԽՄԾՁԲ-2025/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի շրջանակներում «Գ. Պապոյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել էին անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես՝ բացակայում էին հրավերով պահանջված լիցենզիան և ներդիրները, հրավերի հավելված 1.1-ը (տեղեկատվություն կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին) լրացված էր թերի, ինչպես նաև բացակայում էր նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթը, և մասնակցին առաջարկվել էր անհամապատասխանությունների մասին ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք, սակայն վերջինիս կողմից որևէ շտկում սահմանված ժամկետում չի իրականացվել, ինչի հետևանքով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է,

Հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված փաստերը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
	չափաբաժնի									
ծածկագիրը	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԴԴԲԳ ԳԿ-ՀԲԽՄ ԾՁԲ-2025/24	1	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու դատաբժշկական ծառայության մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայություններ	2.500.000	«Գ. Պապոյան» ՍՊԸ	04110175	Արարատի մարզ, ք. Արարատ, Ղուկասյան 5	02.06.2025թ.	ՀՀ ԱՆ «ԴԱՏԱԲԺ ՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐ ԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ	ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետ, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ	Առկա չէ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արթուր Պետրոսյան